

րարիք բերեց: Ընդգէմ կանգնեց արդեօք իւր համար եղած տրոսօրէնութեան արանջումէր արդեօք այն վճռի համար, որով իւր մարմինն չարչարանքի պիտի մատնվէր: Այ. նորա ազօթքը չի էր կատարեալ հաւատովն Աստուծուն. ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, ո՞վ Հայր. ասումէր նա. այլ ինչպէս Քո կամքք է: Եւ ինչի համար էր այսպէս հնազանդ մինչեւ իւր մահն: Արտվճեմեւ ինչ որ ոչ մի ուրիշ մահաւանգու մարդի այնպէս կատարեալ կերպով հասկանալ տուած չէր խիբուստ. նա միտնգամ աչքը ձգելով ապագայ ժամանակին, իմացել էր, որ իւր ցաւն ու չարչարանքը բոլոր մարդկային ազգի փրկութեան, աղատութեան գրաւականը պիտի լինի. որովհետեւ նա գիտէր, որ

Եւստիքիւն է:

Մարդկային ազգին կատարելութիւն քարոզողի ու կատարելութեան մեծ ու միակ Տիագորի աշակերտը ճանաչելով ինձ, ես եւս ցանկանումեմ այս համոզմանս մէջ հաստատ մնալ մինչեւ իմ մահս: Այս համոզումիցս ամենեւին յետ չեմ կենդայ. Եթէ որ իմ վիճակս ու հանգամանքներս աւելի մատանան եւս, եթէ որ այն բեռն, որ երկնաւոր Հայրս վերստ բարձումէ, աւելի եւս ծանրանայ ինձ համար, եթէ որ մի օր սիրտս այնչափ կտրուէր ու այնքան թուլանայի, որ Աստուծու նախախնամութեան բնդգէմ տրանջէի, նորա ճանապարհներին խելքս չհամեմուն համար, այն ժամանակ Դու ազատիր ինձ յուսահատութիւնիցս, ո՞վ սուրբ խօսք թէ Աստուծո՞ւ տէր է: Այս մեծ խօսքը Աստուծու ամեն գործերի գաղանիքի բանային լինի ինձ համար, իմ ուխտագնացութեանս ամեն ճանապարհների վերայ սիրտս հովացնող ջուրը լինի, որ ոյժս վերաս գայ ու նորոգվիմ, ուրախ ուրախ յառաջ տանեմ ճանապարհս ու տեղս հասնեմ: Եւ եթէ կան բաներ, որ ինձ մուրթ են մնում, խելքս համեմելով, ու դուր տեղն եմ հարցնում թէ Ի՞նչ հաճար, յոյս ունիմ որ այս բոլոր հանելուկները կլուծվին կպարզվին այնտեղ, ուր որ իմ հաւատս ու հաւատալս երանելի գէմ յանգիման տեսնելու կրփոխվի: Իմ երկրաւոր կեանքիս գործերը կատարելուց, վերջացնելուց յետոյ այստեղ վերջին հառաչս չնորհակալութեան հառաչ լինի, իսկ այնտեղ, յաւիտեական կեանքում Աստուծոս ամօրոքի մօտն, առաջին ալելուեաս Եւստիքիւն է խօսքը լինի

(Թարգմ.)

Դր. Եղ. Աղ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՔԱՂՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ.

Ե.

Ուսուցիչ յարեմեմ ինչն արեմ ինչն արեմ ինչն արեմ:

Կան ուսուցիչներ, որոնք զարոց մտած միջոցին կարծումեն թէ զանազան գեղեցիկ ծառերով ու ծաղիկներով լի մի այդու մէջ, որ ընծայումէ իւրեան զուարճալի տեսարաններ: Կան եւ այնպիսիները, որոնք մտնելով զարոցը կոր.

ցնումեն խրեանց սյուի ուրախութիւնը, կարծումեն թէ մի խոգան ու անքերրի դաշտի մէջ են դառնում, ուր փոխանակ ծաղկի ու զտղի որոմն, փռւել եւ տա-տառակ է բուսած: Չնայելով այդպիսիներէ աշխատութիւններին ու ջանքերին, որ գործ են դնում մշակելու այդ կարծած ամայի անապատը, այնու ամենայնիւ ոչինչ ար-դիւնք չեն կարողանում ցոյց տալ խրեանց դործի ընթացքում: Ամենափորրիկ զանցաւութիւնը կարողանումէ յուսահատեցնել այդ մարդիկներին, դորա դրդը-վումեն, տա՛ն ու վերայ են լինում եւ մի ուրիշ հնար չդնելով խրեանց մխի-թարելու համար: զնուումն պատժի օգնութեան, որով կարծումեն թէ կարող են ուղղել դորոցի մէջ մշտապէս պատահող անկարգութիւնը, ծուլութիւնը, անբա-րայրանութիւնը, յետադիմութիւնը ու բազմաթիւ պակասութիւնները: Բայց ի՞նչ որ շատ սրտնեղում եւ պառժում, նոր առելի տրամուծիւն քան թէ ուրախու-թիւն է դրում դորոցի մէջ: Այդպիսի մէկը կամ հիւանդ է, կամ զուրկ է ու-սուցչական տաղանդից եւ մանուկներ կառավարելու պայմաններից, որովհետեւ չէ ճանաչում աշակերտների մարմնական ու մտաւոր կարողութիւնները: Յար-գանք, սէր, հնազանդութիւն եւ յաստատելութիւն այն ուսուցիչը կարող է սպա-սել իւր սաներից, որ նոցա էութիւնը ճանաչում, եւ սէր ու յարգանք է ցոյց տալիս նոցա իւր կողմից: Այս վերջին եւս կարող է միայն նորան յաջողել, ինչ որ կարողանումէ իմաստասիրել այդ մանուկ ժողովրդին, կարողանումէ քննել ու զննել նոցա, խրեանց բոլոր դարձողութիւնների ու արարմունքի մէջ: Կարկազա-հութիւնը, կանոնաւորլած վերատեսչութիւնը, ուսուցչի ու աշակերտների մէջ տիրապետող բարեկամական յարաբ'րութիւնը, ահա սորա են կազմում այն պայ-մանն ու հիմը, որով դաստանդութիւնը կարող է արդասաւոր եւ բեղմնաւոր հանդիսանալ: Այս պայմանները վարժապետը չէ կրող ձեռք բերել ոչ խաւարա-յին բռնակալութեամբ, ոչ այն անմիտ թուլարտութեամբ, որը շատ անգամ սիրոյ անունով է ընդունվում անդէտների կողմից: Այլ տասն է. սիրիւր, որ սիրվիս, պատուիր, որ սրտառիս—այս է ուսուցչի եւ աշակերտների մէջ իսկական յարա-բերութիւնը, կամ յարաւերութեան իսկական պայմանը:

Ճշմարիտ է, առհասարակ մանուկները, եւ մանաւանդ հայ մանուկները, քանի մի յատկութիւններ ունեն, որոնք ուսուցչի համար քիչ տանջանքներ չեն պատ-
րաստում, առէ է սոսիօսութիւնը, խորամանկութիւնը, անտեղի զանգամները մի-
մեանց դէմ, ինքնահաճ քնաւորութիւնը, եսականութիւնը եւայլն: Աւելացրու սոցա
վերայ եւ ծնողների յիմար պահանջները, ղիւրահաւանութիւնը, ղէպի ուսուցչին
ունեցած անհամակրութիւնն ու ~~բէհ-բէհ-ն-ը~~, որին տեղ են տուել իւրեանց
սրտերում, թեթեւամիտ մանուկի խօսչերին հաւատալով եւ որն անխոհեմաբար
տեղի ու անտեղի, յայանհով իւրեանց որդիների առաջեւ կորցնումեն ուսուցչի
նշանակութիւնը թէ ընդհանրապէս զպրոցի մէջ եւ թէ իւրեանց որդիների աջում:
Այնու ամենայնիւ ճշմարիտ ուսուցչի համար այս բոլորը չպէտքէ ունենայ որ եւ
է զրական նշանակութիւն: Նա պէտքէ ներողամիտ լինի առ այդ ամենը, նա
պէտքէ ամենայն ուսուցիչների Ուսուցչի պէս ասէ. « Թոյլ տուք ղոցա, ղի ոչ
զիտեն ղինչ զործեն »: « Թոյլ տուք մանկտեսացդ զալ առիս » եւ կամաց կամաց
պէտքէ համոզէ նոցա թէ ինքը բարեկամ է նոցա:

Արդարեւ, աշակերտները չարութիւն են անում յայտնապէս, բայց այդ չարութիւնն անգիտակցաբար է, համարումք չէ, նորա դեռ եւս ապականված չեն, այն ինչ որ չարութիւն է համարվում նոցա մէջ միայն երեխայութիւն է, բնական կիրքերի արտայայտութիւններ են, ուստի հարկաւոր է զգոյշ լինել, չճնշել, չապանանել բողոքօքի մէջ նոցա կենդանութիւնը, նոցա ինքնուրոյնութիւնը: Նորա թէեւ խօսքով չեն արտասանում, բայց լռելիայն եւ քնազգիմամբ դարձնում են իւրեանց երեսը դէպի ուսուցիչը, աչքերնին անշարժ յառելով նորա վերայ պաշտում են. « օգնիր մեզ, աճիր, օգնիր մեզ մենք քեզ ենք յանձնում մեր ապագան մեր վիճակը քո ձեռքին է, մեր բոլոր յոյսը քեզ վերայ է, եթէ կանենումես, կարող ես մեզ բաղդատրել, խնայէս եւ կարող ես ապաքաղդել, եթէ կանենումես: » Եթէ նա, ուսուցիչը, զգայուն սիրտ եւ ազնիւ մարդավարութիւն ունի, պէտքէ ոչ սի ժամ առանց յարգելի պատճառի, իւր դասերից յեռ չմտայ, ոչ մի ժամ, զուր չանցուցանէ, ոչ մի մոլուկի հետ սիրազօրկ չվարվի, այլ մտերմութեամբ, իւր պաշտօնին նուիրված, յուսով եւ համբերութեամբ ատեն ամեն դժուարութեան եւ լինի նոցա անկեղծ բարեկամ, վստահի նոցա բոլոր ապագան արված է իւր ձեռքը: Իսկ ինչ կլիբարբիկի պատժին, մեր կարծիքն այս է, որ ինչպէս տէրութիւնները չեն կառավարվում առանց պատժի դործադրութեան, նոյնպէս եւս մեր դպրոցները չեն կարող առանց պատժի մնալ բայց թէ ինչ տեսակ է լինելու պատժը, այդ մասին հարկաւոր ենք համարում հետեւեալ յօդուարում յայտնել մեր կարծիքը:

Զ.

ԲՆԻՆԻ ԻՆՈՒ ԳՐԹՈՒՆԵՐԻՆ ԿԱՏԵԼՈՒ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԴԱՊՐՈՑԻ ԵՄԱՐՈՒՄԻՆ ԴԱՄԱՐ:

Դպրոցի մէջ խաղաղութիւն, կարգ ու գործունէութիւն պահելը մեծ նշանակութիւն ունի դպրոցի յառաջադիմութեան համար: Շատերը այս նպատակին հասնելու համար զանազան պատիժներ են գործ դնում, որոնք առելի վայել են բրդնաւորներին քան թէ դաստիարակներին: Մեր կարծիքը մարդիս բնութեան վերայ ուրիշ է: մենք ճանաչում ենք նորան իբրեւ մի ազնիւ էակ, որին պատժով ուղղել կամ ուղղիլ կամենալը իսկ տմարդութիւն է: Եթէ ուսուցիչը բանն այն տեղին է հասցրել, որ պատժով պիտի կառավարէ իւր դպրոցն, այն ժամանակ ունայն է նորա հեղինակութիւնը եւ ապարդիւն նորա գործունէութիւնը: Կարդապահութիւնն ոչ թէ պատժից, այլ իսկ եւ իսկ ուսուցչի հարգանքով, հարգանքով կախումն ունի: Գերմանացի մանկավարժներից մէկն ասում է. յանցանքից փախչելն դիրքին է, քան թէ նոյնն ուղղելը: Սորանով կամենում է ասել որ դպրոցական կարգը ուղիղ պահելու համար, նախ պէտքէ աշխատել ժամանակ եւ առիթ չտալ աշակերտին ոչ միայն անկարգութիւն անելու, այլեւ մտածելու այդ մասին: Այս նպատակին կհասնենք եթէ կարողանանք աշակերտի միտքն ու սիրտը գրաւել: Ի՞նչով կարող ենք այս: Նպատակաւոր եւ հետաքրքրական գործունէութեամբ: Մանուկի յատկութիւնն է գործունէայ լինել եւ եթէ նորան գործելու ա-

[illegible]

Բայց ինչպէս կարող ենք մանուկներին շարունակ գործել տալ, եթէ մենք շարունակ չգրադեցնենք մանուկներին, նորա ստիպված կլինին դարձնալ որեւիցէ գործով գրադելու, այդ նոցա բնութիւնն է: Արեւմտ հարկաւոր է նախ աշխատանք, որ ոչ աշխույժանիլը ստիպված լինին շարունակ մեծնոյն գործով պարապելու, որ կ'շտնակէ դաստիարակութեամբ աշակերտներին. եւ երկրորդ չորս տալ որ նորա իւրեանց կ'աւելի կ'ստիպենք աշխատելու, որով դարձնալ անկարգութիւններ յառաջ բերել կարող են: Այս նպատակին հասնելու համար պէտքէ յարմար փոփոխութիւն մուծանել դաստիարակութեան մէջ: «Միշտ մի նոր բան» այս է միշտ նորաստեղծելի նշանաւորը մեզնի տեղ եւ տեղն ժամանակ: Բացի դաստիարակման առարկաների ժամեց ժամ փոփոխելը, եւ իւրաքանչիւր ժամից յետոյ քանի մի բույժ արձակուրդ տալը, հարկաւոր է միեւնոյն ժամի դաստիարակութեան մէջ եւս մի քանի տեսակ փոփոխութիւն ներս բերել: Առանց փոփոխութիւն անելու դաստիարակութիւնը միշտ ճապարակ է մանկաւի կլինի: Բայց եթէ ինչ եղանակով կարող է ուսուցիչն իւր դաստիարակութեան մէջ փոփոխութեան անել առանց կարգը խանգարելու, այս մասին հարկաւոր է մի քիչ երկար խօսել, որ այստեղ անկարելի կլինէր: Աստիցիւր կեանք եւ կենդանութիւն կարող է տալ իւր դաստիարակութեանը, եթէ ունենայ նախ սէր դէպի իւր պաշտօնը, երկրորդ բնական ճարտարութիւն, երրորդ հմտութիւն ենթադրեալ առարկայի մէջ: Արովհետեւ առանց սիրոյ նա շուտով կարող է ձանձորանալ նուիրակում, բայց չափազանց դժուար պաշտօնից, եւ հետեւաբար կ'անձրացնէ իւր լսողներին եւս: Ճարտարութիւն է հարկաւոր նորան, որ ամեն կարգի եւ դասի աշակերտների հետ իւրեանց յարմար ոճով եւ եղանակով կարողանայ ուղարկել: այդ, սա ամենից դժուար պայմանն է, որովհետեւ պահանջումէ ուսուցչից, որ նա մանուկի հետ մանուկ, պատեանակի հետ պատանեակ, եւ երիտասարդի հետ երիտասարդ լինի: Բայց առանց այս պայմաններին չէ կարող նա լաւ մանկավարժ լինել, եթե նա լաւ ուսուցիչ եւս լինէր: Թէ ուսուցիչը հմուտ պէտքէ լինի իւր պաշտօնին, այս մասին երկար խօսելն աւելորդ է, վասն զի իւրեւ ճշմարտութիւն ամեն մարդ գիտէ եւ դոնէ կարող է համոզվիլ, եթէ ինչպէս վառ հետեւանքներ կարող են յառաջ գալ այն ուսուցչի գործունէութեան ընթացքի մէջ, որն իւր պաշտօնին հմուտ չէ: Մենք արդէն յարգում եւ քատաղովումենք այն արուեստաւորին, որ իւր ձեռնարկած

գործի սկզբից մինչև վերջն առաջուց որդին երեւակայած եւ մտքի մէջ կատարելագործած է: Եթէ մեռեալ նիւթերի արհեստագործին հարկաւոր է իւր գործի ընթացքն առաջուց որոշել իւր մտքի մէջ, որչափ եւս առաւել ուսուցչին հարկաւոր էր իւր պաշտօնի ընթացքն առաջուց որոշած ունենալ մտում: Եթէ ուսուցչին իւր պաշտօնին հմուտ չէ, առ չէ կարող իւր աշակերտի մէջ սէր եւ հաճութիւն ծնեցնել ղէպի իւր գործունէութիւնը: Աշակերտի ինքն-սործունէութիւնը կախված է իւր խնդիրն ըմբռնելուց: այս մասին հարկաւոր է հոգացողութեամբ ընտրել այնպիսի խնդիրներ, որոնք լուծելու ժամանակ աշակերտի հետաքրքրութիւնը շարժեն, այսինքն նորա զարգացման համեմատ լինի: Ի հարկէ, եթէ շատ դիւրին լինին խնդիրները, այնպէս որ աշակերտները նոցա լուծուել համար իւրեանց կարողութիւնները սակաւ մշակվին, այն ժամանակ նոցա մտաւոր ոյժերը հետզհետէ կճուլանային եւ անտարրեր ու պաղ կմնային ղէպի գործունէութիւնը: Այս մի անպատեհութիւն է, որին շատ աշակերտներ ենթարկված են եւ ենթարկվում են մինչ ցայսմ: Ընդ հակառակն եթէ խնդիրները շատ դժուար են, այնպէս որ աշակերտները նոցա լուծումը կամ քնաւ չեն կարող եւ կամ թերակատար են լուծում, այն ժամանակ վնասութիւնը եւ յուսահատութիւնը զնաղով սեծանում են եւ թոյլ աշակերտներին զոհ են տանում: Այսպէս ուրեմն կրկոյն ծայրագիծութիւններն եւս հաւասար չափով վնասվաւոր լինելով, պէտքէ միջին ճանապարհը բռնել: Ըստ համոզված ենք որ ամեն ուսուցչի վիճակված չէ ընտրութիւնների մէջ միշտ բաղդաւոր լինել, սակայն հարկաւոր չէ վճարել աշակերտի ղէպը, ընդ ահառակը պէտքէ ա՛րճնաւոր աշխատել լսին համեմատ: Այս նպատակին հասնելու համար եւս հարկաւոր է յաճախ յարաբերութիւն ունենալ աշակերտներին հետ, եւ ճանաչել նոցա անձնաւորութիւնը: Դա ով աշս պայմանին համաձայն ընթանայ, կարող է աւելի յաջողակ լինել ընտրութեան մէջ քան թէ մի մեծամիտ ուսուցիչ, որ իւր աշակերտների հետ յարաբերութիւն ունենալը անվայել է համարում իւր համար այսինքն վարվումէ իրեւ մեծաւոր եւ ոչ իրեւ ընկեր:

Կարող պահելու համար հարկաւոր է բոլոր վատ երեւոյթները իւրեանց ստղմի մէջ կանխել խնդրել ուսուցիչը այսպիսիները սկզբից ի նկատի առնելու համար, պէտքէ ամենքի վերայ դասախօսութեան ժամանակ, հօգուտ ուսուցչի, որպէս զի կարողանայ ճանաչել իւրաքանչիւրի անպատեհ վարքը: Աւելորդ չէ ասել, որ եթէ մի ուսուցիչ սովոր չէ ընդհանուրի վերայ աչք բռնելուն, նորան տակաւին մի էական յատկութիւն է պակաս, լաւ մանկավարժ լինելու համար, որովհետեւ կարգապահութեան ամենալաւ միջոցներից մինն է ուսուցչի հսկող աչքը, առ է դպրոցի արժուն ուստիանը:

Ենթ արդէն ասացինք որ պէտքէ ուսուցչին աշխատի աճեն մի վատ երեւոյթ սղով մէջ կանխել խնդրել, սորանով ասել չենք կամենում թէ ուսուցչին ամեն մի ջնջին եղբարեան վերայ գոռայ, որոտայ ու ճչէ եւ կամ թէ դաւադանական իրաւունքին ղիով: Ընդ հակառակն եւ մենք կամենում ենք որ ջնջին բանը, նոյնպէս եւ ջնջին հնարներով վերջացնել եւ ոչ թէ «լուսն ուղտ շինել»:

Ամեն մի ջնջին արարքի համար բարկանալն ու պատժելը կարող է շուտով ուսուցչի յարգը անպնասցնել իւր աշակերտների մօտ, եւ հետեւաբար նոցա գործունէութիւնը կարող է ասլաղդիւն լինել: Եթէ ուսուցիչը նկատէ ամեն քան եւ արժանապէս

կաւոր է պատիժ, Թող պատիժ նշանակէ. բայց չմտանայ որ պատիժը մի տեսակ հասնելու թիւն ղեղ է եւ ոչ թէ տարտալով ցնելու եւ լեղտալատառ անելու միջոց, Այն պատիժն, որ իր'ա. բարոյական միջոց չէ գործածվում զուր է. եւ անքան ցաւալի. որքան յաճախ է նորա գործածութիւնը:

Հսկի պատժին զիմեմբ աւելորդ է. այլ նախ զգուշացուցման, տալ սպառնալիքի եւ վերջն միայն կարելի էր իսկ պատժին զիմեմբ Պատիժը պէտքէ խնայողաբար լինի: Այն ուսուցչի դասերի ժամանակ ով յաճախ է պատժում, կարգադանչութիւնն աւելի է պատահում. քան թէ մի ուրիշ կերպով վարվող ուսուցչի դասերի միջոցին: Մանկավարժական կէտից նայելով եւս նա է վատ մանկավարժը, ով պատժին է ապաւինում: Պատիժը պէտքէ անուէն գործադրվի, որ աշակերտը նորա ինչ լինելը հասկնայ: Աշակերտը պէտքէ համոզվի իւր կրելի պատժի անհրաժեշտ լինելուն, երբ ներկն անկարելի լինի: Անյարմար եւ ծիծաղաշարժ պատիժը չէ. կարող բարոյքել, այլ առաւել կվաւացնէ պատժվածին:

Կարգադանչութիւնների տեսակները չափից գուրս չունեն: Շատ զպրոցներում մեծ եւ ընդարձակ մեքսիկայ կա՛ր տպագրված պատժական կանոններ են որոշված իւրաքան իւր կարգադանչութեան տեսակի համար. բայց սոյնպիսի պատժական կանոններն ըստ ինքեանց շատ թերի. անպատեհ եւ անգործադրելի են: Փորձը ցոյց է տուել որ անտեղ. որ որ այս կանոնադրութիւններն աւելի խիստ եւ ընդարձակ են, այդպիսի տեղերումն պատահումն առաւել շատ պատուիրանադանչութիւններ: Քաջ ինչպէս անելու է. որ զպրոցը կանոնադրութիւն չունենայ. պատժի մասին, կհարցնէ՞ր զուր: Այս հարկատու եւ կանոններ ու պատուէրներ. բայց պէտքէ զիտեմալ. որ ամենից դուրս որ եւ զերաշունջ օրէնքն ու կանոնն ուսուցչի անձնաւորութիւնն է: Արեւմտաւոր ուսուցչի զերաշունջ կանոնն եւս ոչինչ է: Ուստի կանոնը երկրորդական. իսկ ուսուցչի անձնաւորութիւնն էական պայման է զպրոցի մէջ: Գպրոցի հոգին է ուսուցիչը. իսկ զպրոցական կարգապահութեան հոգին է նորա անձնաւորութիւնը: Եւ չէ աշակերտները մեծարին ուսուցչին եւ սիրեն, բայց կարգապահական կանոններն կոչնչանան, ընդհանրապէս եթէ կարհամարհեն նորան եւ կատեն, այն ժամանակ ամենապատկաւոյն պատժի միջոցով եւս չէ կարելի կարգ պահել: Արեւմտ ուսուցչի մգտումն ու ցանկութիւնը պէտքէ լինի սերտ յարաբերութիւններով իւր աշակերտին սէրն ու յարգանքը զրաւելլու: Այս նպատակին հասնելու համար պէտքէ եռանդով եւ սիրով պաշտպանէ եւ կատարէ այն ամենը, ինչ որ ինքը կպահանջէ իւր աշակերտներից. առ է ահա ուսուցչի առաքինութիւններից մինն. առանց որի նա չէ կարող մանկավարժ լինել: Երկրորդ, ուսուցիչը պէտքէ ենթադրեալ դասախօսութեան նիւթին մտաւորապէս տիրել կարողանայ: Այս նպատակի համար եւս նախապատրաստութիւնը կամ ժամանակից առաջ դաս պատրաստելն ամենահարկաւոր բանն է. որն երկու տեսակ է լինում: Նախ հարկատու է առարկան ամբողջութեամբ կրկնել ամբողջութեան վերայ կատարեալ հմտութիւն ունենալու աւար: Երկրորդ իւրաքանչիւր դասախօսութեանց առաջ լուծել ամբողջից այն խնդիրները միայն, որոնք ենթադրեալ դասախօսութեան բովանդակութիւնը պիտի բողբոջեն: Այս պահանջները կատարելով իւր դասերը կլինին հասկանալի, որոշ, պարզ եւ աներկբայելի իւր խողներին համար: Այսպիսով

զնաճառէ, այդ եւս ոչինչ դժուարութիւն չի մնայ, ամեն անկարգութիւն իւր սկզբում կանխիկ խեղդելու համար: Աշակերտները ճիշտ զգալով իւրեանց ուսուցչի արդարութիւնը, այնուհետեւ ինքնակամ կենթարկվին ուսուցչի կամքին, այսպիսով ամենահասարակ նկատումն անգամ միջոց կարող է լինել անկարգութիւններն արգելելու համար: Ի հարկէ ոչ երկխաները հրեշտակ եւ ոչ ուսուցիչները սուրբ են, որ բնաւ սխալ չգործեն, ամենալաւ կարգաւորված դպրոցներում եւս շատ քիչ քիչ անկարգութիւններ են պատահում: Երբեք համարժեքներում ուսուցչի առաջին հոգսն այն չպիտի լինի քիչ որ պատիժը դորձադրեմ, այլ այն քիչ որ պատճառից կամ որ աղբիւրներից յառաջ եկած են այս կամ այն անկարգութիւնները:

Շատ անգամ կարգազանցութեան կամ անկարգութեան պատճառը նոյն իսկ մեր պարոն ուսուցիչը կարող է լինել, այս կարող է դիտենալ, եթէ ինքն իւրեան անձը խղճմանքով քննէ եւ դատէ, ուստի բնաւ իւր անմին դիպած չի լինի, եթէ խոստովանէ իւր պակասութիւնը յարմար միջոցում, առանց ծաղրական որ լինելու իւր աշակերտների մօտ: Կարգաւանջութեան պատճառը կարող է նոյն իսկ դպրոցի հանգամանքից եւս լինել, քայքայ եթէ ճշմարտաբար դատելով համոզվի ուսուցիչն, որ անկարգութեան պատճառը ոչ իւր սննդն, այլ դպրոցին է վերաբերվում, այն ժամանակ եւս պարտաւոր է հրապարակաւ բողոքել այդպիսի անկարգութիւնների դէմ, եթէ չէ կամենում որ իւրեան յանձնված մանուկները տարաբաղ մարդիկ դուրս դան: Իսկ եթէ անկարգութեան պատճառն աշակերտի ծուրութեան անուշադրութեան եւ կամ ուրիշ բարոյական պակասութիւններից է ծագում, այն ժամանակ ինչ պէտքէ անէ ուսուցիչը: Այսպէս եւս պատիժը չէ առաջինը: Աշակերտներն աստիճանաբար կատարելագործվող էակներ են, որոնք երեքսով եւ ընկնելովն պէտքէ դեպ սովորեն, և ցա պակասութիւնները, սխալներն ու յանցարքները հիւանդութիւններ են, որոնք բժշկութեան են կարօտ: Ուրեմն նախ համբերութիւն եւ խնամատարութիւն է հարկաւոր: Իրաքանչիւր հիւանդութիւն եւ հիւանդ ունին իւրեանց յատուկ դիմն ու ծարը, այսպէս է մտածում եւ գործում բժշկական վարդապետութիւնը: Այսպէս եւս պիտի մտածէ եւ գործէ դաստիարակութիւնը: Քայքայ դիցուք քիչ աշակերտի անկարգութիւնն ուսուցչի եւ դպրոցի օրէնքների դէմ լինի, այստեղ ինչ պէտքէ արած: Առաջին դէպքում հիմնաւոր եւ ազդու պատժելու համար լաւ կլինի որ բնաւ բանի տեղ չգրվի աշակերտի յանցանքը որովհետեւ փորձը ցոյց է տալիս որ զարմանալի կերպով կարող է մարդ յանցանքների սիրտը դրաւել եւ նոցա կոպիտ յատկութիւնները բարոյապէս բժշկել, եթէ բաղդ է ունենում ներքի նոցա այնպիսի հանգամանքների մէջ, ուր յորա մեղապարտ են ճանաչում իւրեանց: Մարդիկ այս տեսակ զգացմունքի համար սննդն իրաւ շատ նուրբ կողմեր, եւ աւելի քան քիչ հաւատալ կարող ենք: Ի հարկէ վրէժխնդրութիւնը եւս քաղցր է ումանց համար եւ արդէն վաղուց է յայտնի մարդկութեան մէջ, քայքայ մի ամենաշատն լիզի է նա, երբ մարդս ընդդէմ իւր խղճին է դործում իւր նմանին ցաւեցնելու նպատակով: Կարծ տես ամէն բանից առաջ զգուշանալու է ուսուցիչն, որ իւր ստի մէջ վրէժ չպահէ դէպի իւր աշակերտը, որպէս զի նորան ատելութեամբ չանդէ:

Եթէ կարգազանցութիւնը դպրոցի վերաբերութեամբ է եւ աշակերտների համար վտանգաւոր է, այն ժամանակ ուսուցչի պարտքն է օրինաւորութեանը դիմել: Հար-

• Դժուար է կոչել ռուսացի եւ աշակերտի մէջ մի գրաւիչ դրուձիւն, այսինքն աշակերտը կաշխատի ուշադրութեամբ հասկանալ ռուսացի հետաքրքրական գտները, իսկ ռուսացիք վտառ լինելով իւր առարկայի մէջ, սիրով կ'ստանձեն եւ կ'իմանայ միշտ աւելի հետաքրքիր անել իւր առարկան: Երկրորն կողմերի այսպիսի ջանասիրութենից կառաջանայ կատարեալ արդիւնք, որ կլինի յատաճադիմութիւն եւ որը կլինի այնտեղ, ուր չկար կարգադանցութիւն: Ռուսացի անձնաւորութեան մասին այսքանն ասելով, մի քանի խօսք եւս պատժի այն տեսակների մասին ասենք, որոնց հետևութեան պատժաւներնք:

Ինչպէս կարգազանցումը իւրենները բազմադիմի են, դոցա դէմ դործ զրաժ պատժական միջոցներն եւս բազմակողմանի են. բայց զլիաւորապէս երկու տեսակի են բաժա-
նում պատիժը. մարմնական եւ բարոյական: Առաջին տեսակին վերաբերում են
ամեն տեսակ հարուածներն եւ այն ամեն զրկանքը, ինչ որ աշակերտը սիրումէ,
օրինակ. ուտելիք, խաղ, եւայլն: Կան տեղեր եւս, ուր մի նշանակեալ զրաժ են
խլում աշակերտներից ամեն մի նիւթական վնասի համար: Սա նոյնպէս պատկա-
նումէ նիւթականին: Բարոյական պատիժ ասելով, հասկանում ենք այն բոլոր պա-
տիժները, որոնք աշակերտի զանցառածը նորից իւր տեղը բերելուն են նպաս-
տում, օրինակ եթէ աշակերտը մի խնդիր չէ կատարել, նա յետ է մնում նոյնը
կատարելու համար:

Ըստ հարկի պատիժների զործածութեան ժամանակ պետքէ չմոռնալ այս առածը թէ. գործը քեզը չէ, ուրեմն դժբեկ տալ նախատեսաբար, բայց երբէք չքեռնաւորել: Իբրեւ ամենազերջին եւ ամենախիստ պատիժ դպրոցից միանգամայն արժակեղն է, որը շատ ու շատ հազուադէպ պիտի լինի ամեն մի բարեկարգ դպրոցի մէջ:

Ահա այս է մեր կարծիքը պատմի մասին. բայց խոստովանում ենք որ պատ-
րաստ ենք սիրով ընդունել ամեն մի բարի ցուցմունք սորա վճռարեբուժեաւոր աւելի
փորձվածների կողմից:

Ինչպէս տեսնում ենք, ուսուցչական պաշտօնը մի շատ դժուար եւ անտանկիլ, բայց մի նուիրական եւ սրբապան պաշտօն է, նա պիտի կենդանի էակին նորից ձեւակերպէ եւ կատարելագործէ մտաւորապէս: Արարչի ձեռից ձեւակերպված անձնաւորութիւնը կարօտում է ուսուցչի գործունէութեանն. ուրեմն ուսուցչի գործող-նէութիւնը Արարչագործութեան արդիւնքը կատարելագործելուն ծառայել է նշանակում. ուրեմն նա գործակից է Աստուծուն. այսպէս քարծր եւ սուրբ է ուսուցչի կոչումն: Այսպէս պէտք է հասկանայ ամեն ուսուցիչ, որ կարողանայ ճանաչել իւր տկարութիւնը եւ հետզհետէ ձգտի դէպի կատարելագործութիւնը, որով միայն կարող է իւր կոչմանն արժանի լինել, ինչքան որ մենք մեր կոչումն նուիրական եւ քարծր ենք ճանաչում այսօր սրտի ցաւով խոտտովանում ենք որ դեռ եւս շատ ստոր եւ շատ անվայել դրութեան մէջ ենք գտնվում:

h.

1.2. የግልጽ ስራ ለማድረግ የሚያስፈልጉትን ሰውገንዘብ ማግኘት፡

Աշակերտի յառաջադիմութիւնը միայն նոյն աշակերտի ընդունակութենից եւ ջանասիրութենից չէ կախում, այլ եւ դպրոցի ներքին եւ արտաքին բարեկարգութիւն-

ներից: Դպրոցի դիրքը շէնքը եւ շրջակայրի հանգամանքները, իւրաքանչիւր դաստ-
սենեակի յարմարութիւնը կամ անյարմարութիւնը, մէջի պարագաները, կահ կար-
սիքը, ուսման օժանդակիչ միջոցները, օրինակ դասադիրքը, աշխարհագրական քար-
տէզները, բնապատմական ժողովածուներն ու գործիքներն եւայլն աշակերտներից ըստ
զարգացման եւ ըստ հասակի, դասակցական խմբեր կազմելը, դասաւանդելի առար-
կաների ընդհանուր նախադիժը, եւ դասերի բաշխումն, դասերի սկսվելու, շարունա-
կութեան եւ վերջանալու ժամանակ, ուսուցչի կամ ուսուցիչների կողմից լինելի
անհրաժեշտ կարգապահական պայմանները, աշակերտների եւ ուսուցիչների կա-
նոնաւոր երթեւեկութիւնը կամ դասերին ներկայ լինելը • նախորոշ կարգապահա-
կան կանոնների ճիշտ գործադրութիւնը ահա սորա են դպրոցի արտաքին պայ-
մանները: Ինչ կվերաբերվի դպրոցի ներքին բարեկարգութեան • դա կախված է սե-
սուցչի մտաւոր զարգացումից, բարեխղճութենից ու դաստասնական տաղանդից
կամ ճարտարութենից: Ներքին բարեկարգութիւնը կախված է նմանապէս ուսուցիչ-
ների միմեանց հետ եւ դէպի աշակերտներն եւ աշակերտների ծնողներն ունեցած
բարեկամական եւ մարդասիրական յարաբերութիւններից:

Նայելով թէ վերոյիշված հանգամանքները նորագոյն մանկավարժական պայման-
ներին որ աստիճանով են համապատասխան, նոյն աստիճանով եւս հասարակութիւնը
կարող է արդիւնք սպասել իւր դպրոցներից:

Դպրոցից դուրս աշակերտի մտաւոր եւ բարոյական զարգացման վերայ, անշուշտ
ամենամեծ ազդեցութիւն ունի ընտանեկան եւ հասարակական կեանքը. ցաւալի
սրտով պէտքէ խոստովանենք որ ոչ մեր դպրոցների արտաքին եւ ոչ եւս ներքին
բարեկարգութիւններն են համապատասխան արդի մանկավարժական պահանջներին
եւ ոչ եւս մեր ընտանեկան եւ հասարակական կեանքն է կրթիչ եւ զարգացուցիչ:

Այս իսկ է պատճառը, որ մեր մանուկներին կարողանումենք մի որ եւ իցէ բան
սովորեցնել, բայց չենք կարողանում զարգացնել եւ կրթել: Այնու աճենայիւ լաւ է
կարելութեան չափ կրթված ու զարգացած լինել քան թէ բոլորովին անկրթ եւ չզար-
գացած:

Ս. Բ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԸՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ. (Արարատ, № 7),

(Վերջ) .

Հայերը մինչև այժմ՝ ևս Այրարատեան նահանգի մասում կրնակեն,
Դարասաշայից մինչև Գառնիչայ և Ահմանգան Երասխի վերին հոսանքի եր-
կու ափերի ուղղութեամբ, Բնակիչները կաւելանան, և Հայերը կսկսեն
զգալ իւրեանց Drang nach Osten, (արշաւանք դէպի Արևելք) որտեղ այդ
ժամանակը Մարաստանին հպատակօղ անյայտ ցեղերը կրնակէին, Հաս-
կանալի է, որ Հայերը պիտի նուաճէին Երասխի վերայ դէպի արևելք
գտնված երկիրները: Տարեգիրը կասէ. « Թէ Ամասիայի որդի և ժառանգ, 14)
Գեղամ կերթայ դէպի արևելք և Գողջայ լճի մօտ բնակութիւն կհաս-